ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136 Էլ. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.08.2015թ
257-7-ի

ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարարի առաջին տեղակալ
պարոն Գուրգեն Դումանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Դումանյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների երկրորդ ծրագրի (http://www.ogp.am/u_files/file/commitments_OGP_AP2_ARM.pdf) իրականացման մոնիտորինգ:

Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի հինգերորդ հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. Համաձայն հանձնառության իրականացման գործընթացի՝ Գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակման ապահովման համար ո՞ր մասնավոր ընկերությունների հետ են տարվել բանակցությունները, հստակեցվել համապատասխան աշխատանքների շրջանակը:
2. Խնդրում ենք տրամադրել մշակված տեխնիկական առաջադրանքը և գնումների գործընթացի համապատասխան փաստաթղթերը /գնումների առաջարկներ, պայմանագրեր և այլն/:
3. Ի՞նչ ֆինանսական միջոցներով է ապահովվել հանձնառության իրականացումը և որքա՞ն է ՀՀ դրամով կազմել ամբողջ աշխատանքը (պետբյուջեից հատկացումներ, դոնոր կազմակերպություններ կամ այլ):
4. Արդյոք, համաձայն Գործողությունների ծրագրի հինգերորդ հանձնառության, 2015 թ.-ի օգոստոսի մեկի դրությամբ www.gnumner.am կայքում առցանց հեռարձակվու՞մ են Գնումների բողոքարկման խորհրդի նիստերը: Եթե ոչ, ապա խնդրում ենք նշել պատճառները:

Կանխավ շնորհակալ եմ:
Շուշան Դոյդոյան
ԻԱԿ նախագահ